

Armenian General Benevolent Union of Canada Inc. Toronto, Ontario

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ

30 Progress Court, Scarborough, Ont. M1G 3T5 (416) 431-2428

Թորոնթո, 11 Մայիս 1988

Գերշ.Տ.Թորգոմ Ս.Արք.Մանուկեան

Բարեխնամ Առաջնորդ

Հիւս.Ամերիկայի եւ Գանատայի Արեւելեան Թեմի

նիւ Եորք, Ն.Ե.

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Այս տարին կը զուգադիպի Հ.Բ.Ը.Միութեան Թորոնթոյի Մասնաճիւղի Հիմնադրութեան 60-ամեակին: Վաթսուն տարիներ առաջ խումբ մը ազգասէր հայորդիներ, առաջնորդութեամբ գաղութիս նահապետ՝ Տիար Լեւոն Պապայեանի, կեանքի կոչած են սոյն Մասնաճիւղը, որ գաղութին կազմաւորման եւ հայր հայ պահելու սրբազան ու հրամայական գործին իր թանկագին քաժինը բերած է:

Վաթսունամեակի իր սեմին Հ.Բ.Ը.Միութեան Թորոնթոյի Մասնաճիւղը դարձած է արդէն նկատուելի ոյժ մը, առաջնորդող կազմակերպութիւն մը եւ վաթսուն տարիներու վաստակ մը ետին ձգած, ինքնավստահ քայլերով, վերանորոգուած ոգիով կը քալէ դէպի պայծառ Աղամանդեայ յոբելեանի հանգրուանը:

60-ամեակը բացառիկ ու նշանակալից հանգրուան մըն է մեր գաղութին տարբարութեանց մէջ, գոր մեծ շուքով եւ բացառիկ հանդիսաւորութեամբ պիտի տօնակատարուի յառաջիկայ Հոկտեմբերի 15-ին: Հ.Բ.Ը.Միութեան Պատկառելի Կեդրոնական Վարչական Ժողովն ալ սոյն հանգրուանը բացառիկ պատիւի կ'արժանացնէ Հ.Բ.Ը.Մ.եան 70-րդ Ընդհանուր Ժողովը կայացնելով Ալեք Մանուկեան Մշակ.Կեդրոնէն ներս:

Արդ, Սրբազան Հայր, պիտի խնդրենք Ձերդ Սրբազնութենէն որ այս առթիւ մեզի շնորհէք Ձեր Հայրական Օրհնութիւնները, որուն համար Ձեզի կը ներկայացնենք երախտագիտական մեր ջերմագոյն զգացումները:

Մատչելով ի համբոյր Ձեր Ս.Աջոյն՝

Անդրանիկ Չիլինկիրեան

Վարիչ Քարտուղար

Յ.Գ.

Ն.Ս.Օ.Տ.Տ.Վազգէն Ա. Ամէնայն Հայոց Վեհափառ Հայրապետին ուղարկած ենք նոյնիմաստ նամակ մը, որուն պատճէնը կը գտնէք ներփակ:

Թորոնթո, 11 Մայիս 1983

Նորին Սուրբ Սծութիւն Տ.Տ.Վազգէն Ա.

ծայրագոյն Պատրիարք եւ Կաթողիկոս Ամէնայն Հայոց  
Արարատեան Նախամեծար Սուրբ Աթոռի Էջմիածնի,  
Էջմիածին, Հայաստան.

Վեհափառ Տէր,

Ասկէ վաթսուն տարիներ առաջ, հիւրընկալ Գանատայի Թորոնթո քաղաքին մէջ  
մարմին առաւ եւ կեանքի կոչուեցաւ ազգանուէր Հայկական Բարեգործական Ընդհան-  
նուր Միութեան Թորոնթոյի Մասնաճիւղը, ճիգերովն ու զոհողութեամբը այն ատեն-  
ուայ Հայ զաղութը կազմող երկոտասնեակ մը ընտանիքներուն, գլխաւորութեամբ  
Պրն.Լեւոն Պապայեանի:

իրօք, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը, որ այս տարի տօնեց  
իր հիմնադրութեան 77ամեակը, արդէն կը փաստէ թէ իր բացած ակօսը խոր է հայ  
հոգիներէ ներս, ուրկէ միայն ու միայն երախտագիտութեան ու հաւատարմութեան  
ազնիւ խօսք ու սէր ու նուիրում կը ծառայէ այն հեռտես մարդոց սրտին,  
որոնք Զրիստոսի Հրաշափառ Յարութեան Սրբ, նեղոսի փիին, նՈՐ ԱՐԵՒԻ ՄԸ ԾԱԳԻԼԸ  
ՄԵՐ ԱԶԳԻ ՎԵՐԵԻ աւետեցին:

60 տարեկան է այսօր Հ.Բ.Ը.Միութեան Թորոնթոյի Մասնաճիւղը: Վաթսուն  
երկար տարիներ, կարելիութիւններու ներած չափով Ան իր թանկագին բաժինը բե-  
րած է զաղութին կազմաւորման եւ հայը հայ պահելու սրբազան ու հրամայական  
զործին մէջ: Արդարեւ, հարիւրաւոր պատանի-պատանուհիներ, Երիտասարդ-երիտա-  
սարդուհիներ եւ տարեցներ անդամակցելով Անոր ոչ միայն կրցան աւելի լաւ  
տոկալ ծուլումի ու այլասերման դէմ, այլ նաեւ անոր ընծեռած պատեհութիւններ-  
ուն՝ մշակութային, ընկերային թէ մարզական ձեռնարկներուն միջոցաւ դարձան  
հաւատարիմ քաղաքացիներ, տիպար հայորդիներ, գիտակից հայեր, Սբ. Էջմիածնի  
Լուսաւորչի Կանթեղով լուսաւորուած հայեր, քաջածանօթ հայ պատմութեան, հայ  
մշակոյթին ու վերածաղկող Հայրենիքի լուսաշող իրականութեան:

Այսօր, Թորոնթոյի մէջ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը դար-  
ձած է նկատուելի ոյժ մը, առաջնորդող կազմակերպութիւն մը եւ իբրեւ այդպիսին  
իր ազգային թանկագին ծառայութիւնները նորակառոյց Ալեք Մանուկեան մշակութային  
կեդրոնէն ներս յառաջ կը տանի մեծ թափով եւ վերանորոգուած ոգիով:




շար. 2

Հ.Բ.Ը.Միուլթեան Թորոնթոյի Մասնաճիւղը իր Վարչութեամբ, Տիկնանցի, Սանուցի, Երիտասարդացի, Պարախումբի, Երգչախումբի, Թատերախումբի, Արուեստի, Երաժշտական, Իատիոկիսաժամի, Հեռատեսիլի, Թերթի Յանձնախումբերով, աւելի քան 1.000 հաւատաւոր անդամ-անդամուհիներով եւ հոյլ մը համակիրներով, գոտեպնդուած Բարեգործականի զաղափարականով, զինուած անցեալի փորձառութիւններով, ներկայի իրադարձութիւններով եւ ապագայի հեռանկարներով, ձեռք ձեռքի տուած, լծուած է ազգաշինութեան վսեմ գործին իրականացնելու համար այն երազները, զորս Միուլթեանս անմահ Հիմնադիրը՝ Պօղոս Նուպար Փաշա աւանդ թողուց մեզի:

1983-ը Հ.Բ.Ը.Միուլթեան աւանդապահ եւ գործունեայ Թորոնթոյի Մասնաճիւղի ՎԱԹՍՈՒՆԱՄԵԱԿՆ է: Բացառիկ եւ նշանակալից հանգրուան մը մեր գաղութին տարեգրութեանց մէջ, զոր մեծ շուքով պիտի տօնակատարուի յառաջիկայ Հոկտեմբերին: Իսկ Հ.Բ.Ը.Միուլթեան Պատկառելի Կեդրոնական Վարչական Ժողովը բացառիկ պատիւի կ'արժանացնէ սոյն հանգրուանը, Հ.Բ.Ը.Միուլթեան 70 ընդհանուր ժողովը նոյն առթիւ կայացնելով Ալեք Մանուկեան Մշակութային Կեդրոնին մէջ:

Արդ, պիտի հայցենք Ձերդ Վեհափառութենէդ որ այս առթիւ Մասնաճիւղիս շնորհէք Օրհնութեան Գիր մը, որուն համար Ձեզի կը ներկայացնենք մեր ըլլոր անդամներուն ու համակիրներուն Ձեր Անձին հանդէպ տածած անսահման սիրոյ եւ գուրգուրանքին հետ քաջատողջ-արեւշատութեան անոնց լաւագոյն մաղթանքները:

Մատչելով ի համբոյր Ձեր Սուրբ Աջոյն՝

  
Անդրանիկ Զիլինկիրեան  
Վարիչ Քարտուղար